ԳԱԼՈՒՍՏ ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ. Հայագիտական ուսումնասիրություններ. գիրք Բ. աշխատասիրությամբ պրոֆ. Պ. Հ. Հակոբյանի, *Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարան, 1998, 816 էջ:*

Երևանի պետական համալսարանի հայագիտական հետազոտությունների կենտրոնի մակնիշով լույս է տեսել մեծանուն հայագետ Գ. Տեր-Մկրտչյանի հայագիտական ուսումնասիրությունների երկրորդ ծավալուն հատորը՝ անվանի բանասեր, պրոֆ. Պիոն Հակոբյանի հմտալից աշխատասիրությամբ: Գիրքը նվիրված է Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակին, տպագրվել է Ամենայն Հայոց կաթողիկոս, վաղամեռիկ Գարեգին Առաջինի հովանավորությամբ ու հրամանով, Լոնդոնում գտնվող Միհրան և Ազնիվ Իսեֆյան բարեսիրական հիմնադրամի նյութական աջակցությամբ:

Սույն հատորը մասն ու շարունակությունն է կազմում 1979-ին Երևանի պետական համալսարանի հրատարակած Գ. Տեր-Մկրտչյանի «Հայագիտական ուսումնասիրություններ» առաջին գրքի, որը կազմել և խմբագրել էին Պ. Հակոբյանն ու Էմ. Պիվազյանը՝ Պ. Հակոբյանի առաջաբանով և ծանոթագրություններով: Այս երկու հատորով փաստորեն ի մի է բերվում, գիտականորեն համակարգվում և հրատարակվում Գ. Տեր-Մկրտչյանի՝ հայագիտության այդ անխոնջ մշակի դիտական հիմնական ժառանգությունը, որը XIX դարի վերջերի նոր հայագիտական մտքի շքեղ սլոթկումներից է և մնայուն արժեքներից: Այդ ժառանգությունը հատկանշվում է հայագիտական տարբեր բնագավառների, տարբեր հարցերի ու խնդիրների բացառիկ լայն ընդգրկումով, արծարծված խնդիրների դիտական խոր հիմնավորումներով, նորութաբանությամբ և քննական անաչառ վերաբերմունքով՝ մեծ մասամբ խարսխված միջնադարյան մատենագրական ու վիմագիր աղբյուրների՝ հեղինակի տարիների կատարած համառ ու տքնաջան սլրպտումների, նրա իսկ հայտնաբերած մատենագրական մի շարք նոր ու կարևոր հուշարձանների հրապարակումների և դրանց ընձեռած հարուստ տվյալների նորոգ և ինքնատիպ քննությունների վրա:

Գ. Տեր-Մկրտչյանի դիտական ժառանգությունը թեմատիկ առումով բաժանվում է մի քանի խմբերի: Առաջինը՝ միջնադարյան ձեռագրերից իր իսկ հայտնաբերած և կազմած մատենագրական տարբեր հուշարձանների գիտաքննական բնագրերն են, որոնց քանակը հասնում է ավելի քան երեք տասնյակի: Դրանց թվում են Անանիա Շիրակացու «Յաղագս ամպոց եւ նշանաց», «Յաղագս հարցման եւ լուծման», «Յաղագս շրջագայութեան երկնից» աշխատությունները, X դարի հայոց կաթողիկոս Անանիա Մոկացու չորս թղթերը, նույն դարի նշանավոր եկեղեցական գործիչ, Նարեկյան դպրոցի հիմնադիր Անանիա Նարեկացու «Գիր խոստովանութեանը», VI դարի փիլիսոփա Դավիթ Հարքացու իմաստասիրական հարցվածներն ու մի քանի պատառիկները, Մխիթար Գոշի Խոսրով վկային նվիրած ներբողյանը, VI դարի հեղինակ Սյունյաց Պետրոս եպիսկոպոսի «Գովեստ ի սուրբ Աստուածածին», «Հարցմունք յաղագս մարմնաւորութեանն Տեառն», «Յաղագս հաւատոյ», VIII դարի մատենագիր Ստեփանոս Իմաստասեր Սյունեցու «Վասն ապականութեան մարմնոյն» դավանաբանական երկը, V դարի հեղինակ Խոսրովիկ Թարգմանչի «Առ այնոսիկ, որ ասեն բնութեամբ անձեւ եւ անսկիզբն» երկի մի հատվածը՝ ուղղված Քաղկեդոնի ժողովի դեմ, Հովհան Մանդակունուն վերագրված երեք երկերի բնագրերը և միջնադարյան այլ հեղինակների երկերի պատառիկներ: Վկայաբանական հուշարձաններից արժեքավոր են հատկապես ասորի վկաներ Գորիա և Շմոնի, պարսից վկաներ Հովսեփ Նորաշենցու և Գրիգոր Պարսկի, հայ վկաներից Տեր Հուսկա որդու և Խոսրով Գանձակեցու նորագյուտ վարք-վկայաբանությունների հրատարակությունները: Պատմամշակութային և դրական-աղբյուրագիտական կարևոր

արժեքով են հատկանշվում «Գիրք հերձուածոց», «Վասն հերձուածողաց բանք եւ զրոյցք, իբրեւ առասպելաբանութիւնք» ուշագրավ հուշարձանների, «Հայելի վարուց» ե. «Վարք սրբոց Հարանց» ժողովածուների առակների հրապարակումները, ինչպես նաև Աբրահամ Խոստովանողի «Վկայք Արեւելից» ժողովածուի հետմահու հրատարակությունը:

Գ. Տեր-Մկրտչյանի բնագրագիտական աշխատությունների մեջ, հարկավ, կարևորագույն տեղ ունեն Ագաթանգեղոսի և Ղազար Փարպեցու Հայոց պատմությունների քննական բնագրերը՝ առաջինը կազմված Ստ. Կանայանցի, իսկ երկրորդը՝ Ստ. Մալխասյանցի աշխատակցությամբ, ինչպես նաև այլ հեղինակների աշխատակցությամբ կազմված կամ այլոց անուններով հրապարակված բնագրերը, որոնք, հասկանալի պատճառներով, չեն ներառվել հեղինակի գրախոսվող աշխատությունների ներկա երկհատորյակում:

Գ. Տեր-Մկրտչյանի գիտական ժառանգության մեջ թեմատիկ առանձին խումբ են կազմում ձեռագրագիտական, ծածկագրագիտական և վիմագրագիտական աշխատությունները: Գրանցից առանձնապես կարևորվում են Փավստոս Բուզանդի և Ղազար Փարպեցու պատմագրական երկերի ձեռագրերի բանասիրական-տեքստաբանական հմուտ քննությունները, Էջմիածնի խաչքարերի վրա եղած հայերեն արձանագրությունների, Արագածոտնից հայտնաբերված հինգ նոր արձանագրությունների վերծանումները, Ն. Մառի հրատարակած հայերեն արձանագրություններում «Նըստոց» միջնադարյան տերմինի վերականգնումը, Սևանի աջից ձախ գրությամբ հայերեն արձանագրության վերծանումն ու մեկնաբանումները, Սարդարապատի և Դալի-Բաբայի ուրարտական սեպագիր արձանագրությունների հրապարակումներն ու վերծանությունը, ինչպես նաև տարբեր հոգևոր հայրերի կողմից Ներսես Աշտարակեցուն ուղղված հինգ ծածկագիր նամակների ծածկագրության վերծանումն ու հրատարակությունները, որոնք բոլորն էլ վկայում են մեծանուն հայագետի բացառիկ տաղանդի ու բաղմիմացության մասին:

Գ. Տեր-Մկրտչյանի հայագիտական ժառանգության մեջ պատմական բացառիկ արժեք են ներկայացնում նրա մատենագրական-աղբյուրագիտական ուսումնասիրությունները՝ նվիրված Մովսես Խորենացու «Հայոց պատմությանը» («Խորենացու պատմության ուսումնասիրություն», «Խորենացու ժամանակը որոշելու նոր փորձ»), Ագաթանգեղոսին («Ագաթանգեղոսի աղբյուրներից»), հայ մատենագրական հուշարձանների ժամանակագրության ճշգրտումներին («Տիմոթեոս Կուզի Հակաճառության հայ թարգմանության ժամանակը և Սուրբ Գրքի երրորդ կամ «նորաբեր» հայ թարգմանությունը», «Տիմոթեոս Կուզի մասին», «Հայ մատենագրության հնագույն թվականները»), «Հայկականք» ընդհանուր խորագրով չորս ընդարձակ հոդվածաշարերին՝ բաղկացած բազմաթիվ մանր հետազոտություններից և նվիրված հայ հին մատենագրական տարբեր հուշարձանների տարբեր կողմերի կամ տարբեր մատենագիրների կյանքի ու գործունեության նորոգ լուսաբանումներին:

Պատմագիտական, աղբյուրագիտական և տեղագրական ուշագրավ ճշգրտումներով են հատկանշվում Գ. Տեր-Մկրտչյանի «Գարագաշյանի Քննական Հայոց պատմությունը», «Հայ գրերի 1500-ամյակի առթիվ» հոդվածները և Է. Ռեկլյուի «Լազիստան, Հայաստան և Քուրդիստան», «Ռուսական Հայաստան կամ Արաքսի ավազանը, Ուրմիա լիճ և Առաջավոր Ասիա» գրքույկների հայերեն իր թարգմանություններին կցած առաջաբանն ու ծանոթագրությունները:

Գ. Տեր-Մկրտչյանի գիտական ժառանգության մեջ առանձնահատուկ տեղ են դրավում «Ճակատագրի տոնը», «Մաթերի մասին» և ուրարտերենի, ուտիերենի ցեղակցությունը շոշափող «Ուրարտյան բևեռագրերի լեզուն» ուսումնասիրությունները, որոնք ունեն բանագիտական, պատմաազգագրական բնույթ և վկայում են հեղինակի խոր ու հիմնավոր դիտելիքները հայագիտության այս բնագավառներում ևս:

Ի վերջո, Գ. Տեր-Մկրտչյանի թողած գրական ժառանգության մեջ կարևորագույն բաժին են կազմում տարբեր հա-

յագետներին, գործիչներին, կազմակերպություններին և պարբերականներին նրա հղած նամակները, որոնց այս հատորում զետեղված նմուշների քանակը հասնում է ավելի քան հարյուրի (107): Նամակների ճնշող մեծամասնությունն ուղղված է մեծանուն հայագետներ Նիկ. Մառին (29), Ստ. Մալխասյանցին (22), Գր. Խալաթյանցին (6), Հակոբոս Տաշյանին (5), Կ. Կոստանյանցին, Լ. Մսերյանին, Ստ. Կանայանին, Բ. Կյուլեսերյանին, Գր. Գալեմքարյանին և ուրիշների: Նամակների մեջ արտացոլում են գտել Գ. Տեր-Մկրտչյանի գիտական լայնահուն հետաքրքրությունները, նորոգ տեսակետները, անձնական կյանքի հանգամանքները, որոնք գալիս են առավել խորացնելու և բոլորելու գիտնականի, մարդու, քաղաքացու, գործչի նրա ամբողջական գիմանկարը:

Ահա այս հիշատակված (մասամբ էլ չհիշատակված) աշխատություններն ու նյութերն են ընդգրկվել Գ. Տեր-Մկրտչյանի «Հայագիտական ուսումնասիրություններ» երկհատորյակում:

Գ. Տեր-Մկրտչյանի ներկա երկհատորյակում ընդգրկված աշխատությունների բնագրերի մեծ մասը Պ. Հակոբյանի և Էմ. Պիվազյանի ցուցումներով ժամանակին նախապատրաստել են Երևանի պետհամալսարանի հայագիտական հետազոտությունների կենտրոնի աշխատակիցները, մասնավորապես երիտասարդ հայագետ Ա. Տեր-Ստեփանյանը: Հետագայում այդ նյութերը Պ. Հակոբյանի կողմից համեմատվել են հին ու ձեռագիր տարբերակների հետ, ստացվել անհրաժեշտ լրացումներ և ուղղումներ ու վերջնականապես կազմվել դրանց բնագրերը, որոնց ընդհանուր խմբագրությունը կատարել է հանգուցյալ Էմ. Պիվազյանը: Այսուհանդերձ, սույն երկհատորյակի կազմման և հրատարակման գիտատեքստաբանական ողջ աշխատանքը ընկած է եղել Պ. Հակոբյանի վրա: Նա որոնել, տարբեր արխիվներից հայտնաբերել, հանել, համակարգել, տեքստավորել Տեր-Մկրտչյանի անտիպ երկերն ու գրուստ նամականին, ջանասիրությամբ խորաթափանցությամբ մանրամասն ծանոթագրել երկհատորյակում ընդգրկված բոլոր նյութերի բնագրերը, դրանց (մասնավորապես տպագրվածների) մեջ ներառել Գ. Տեր-Մկրտչյանի հետագայում կատարած բնագրային ճշգրտումներն ու լրացումները, մասնագիտական հմտությամբ բացահայտել բնագրերի ծանուցման ենթակա բոլոր իրողությունները: Բացի այդ, ներածության կարգով նա առաջին հատորն օժտել է Գ. Տեր-Մկրտչյանի կյանքն ու հայագիտական վաստակը բնութագրող մի հմտալից ուսումնասիրությամբ, իսկ երկրորդ հատորին կցել երկհատորյակի հրատարակության հանգամանքներին նվիրված առաջաբան: Երկրորդ հատորը հիմնականում ստեղծվել է Պ. Հակոբյանի ջանքերով, որին իր եռանդուն օժանդակությունն է բերել դուստրը՝ երիտասարդ բանասեր Անահիտ Հակոբյանը: Նա է վերծանել ու մեքենագրել նորահայտ բոլոր նյութերն ու նամակներն իրենց ծանոթագրություններով, հետևել հատորի տպագրության ընթացքին, վերջնականապես սրբագրել այն և կազմել անվանացանկը:

Հատորն անվանացանկից և ծանոթագրություններից բացի օժտված է նաև Գ. Տեր-Մկրտչյանի աշխատությունների այբբենական, նրա պատրաստած դիտաքննական բնագրերի և նամակների հասցեատերերի ցանկերով: Այս հատորն առհասարակ կազմված է գիտական պատշաճ մակարդակով, խիստ խնամքով, միանգամայն վայել մեծանուն հայագետի պատկառելի ժառանգությանը: Գ. Տեր-Մկրտչյանը, հանձին Պիոն Հակոբյանի, գտել է իր հայագիտական վաստակի ճշմարիտ գնահատողին և այն գիտականորեն արժանի մատուցողին:

Սույն երկհատորյակը մի կողմից յուրահատուկ հուշարձան է մեծ հայագետի անմահ հիշատակին, մյուս կողմից մի թանկագին նվեր մերօրյա հայագիտությանը, որն այսուհետ, առանց ջանքեր թափելու, հասու կդառնա տարբեր պարբերականներում, արխիվներում, առանձին հրատարակություններով ցրված նրա գիտական ժառանգությանը, որը նոր հայագիտական մտքի անանց արժեքներից է:

ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ